

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԸ ԼԵԶԻԻ ԽՆԴՐՈՒՄ

Պահպանողականները իրանց համարում են հալոց լեզվի քերականութեան սրբազան կրակը անշէջ պահելու կոչումն ունեցող վեստալուհիներ:

Կան պահպանողականներ, որոնք ամենալն բարեխղճութեամբ կատարում են իրանց պարտականութիւնները: Նրանք աւելի շուտով կերակուրը, բերանները տանելու տեղ, քիթները կը տանեն, քան մի որ և է սխալ կ'անեն հոլովման կամ խոնարհման մէջ և աւելի ներողամտութեամբ կը վերաբերեն իրանց երեխաներին սպանողին, քան ալն մարդուն, որ հարկ եղած լարգանքով չի վերաբերում Չամչեանի քերականութեանը:

Կարելի է, ի հարկէ, նկատել, որ սեռական հոլովը տրականից զանազանելու համար ամեննին անհրաժեշտ չէ Դեօթէի գլուխն ունենալ կամ Հումբոլդտի է բ ու զ ի ջ ի ա ն, ալ բաւական է, ինչպէս ասում է գերմանական մի հռչակաւոր հրապարակախօս, նման լինել «մուրացկաններին, որոնք դիտեն իրանց իւրաքանչիւր դրոշի գրոշին ու թւականը». բալը չի կարելի և չը խոստովանել, որ քերականութիւն լաւ իմանալը գովելի բան է:

ձիշտ է մի երևելի արժանաւորութիւն չէ ալդ, բալց ինչ և իցէ, արժանաւորութիւնը արժանաւորութիւն է, և երանի թէ ուրիշների լեզուի վրալ բոլոր չարձակողները իրանք միշտ անարատ լինէին ալդ կողմից: Ամենավրդովեցուցիչն էլ հէնց ալն է, որ հալոց լեզվի մաքրութեան պահպան ալդ վեստալուհիներից չատերը իրանք չը գիտեն հալերէն կանոնաւոր գրել, որ կ'աշխատեմ ապացուցանել ամեն անգամ, երբ առիթ լինի:

Այս անգամ ես ուղում եմ խօսել ալդ վեստալուհիներից մէկի՝ պ. Ն. Ք.-ի մասին, որ համարում է հալկաբան, պատմաբան, արեւելաբան և ալլն ուրիշ անհամար բաներ:

Պր. Աւետիք Արասխանեանցի «Արևելեան աղգերի հին պատմութիւնը» վերնագրով գիրքը քննադատելիս («Արձագանք» № 24) պ. Ն. Ք. ի միջի ալոց և զլխաւորապէս չարձակում է հեղինակի լեզվի վրալ: Ես ընդունում եմ պ. Ն. Ք.-ի արած նկատողութիւններից մի քանիսի

ճիշդ լինելը, բայց հարցը ալստեղ պ. Արասխանեանցի լեզուի մասին չէ: Ինձ ալժմ հետաքրքրում է ալն թէ պ. Ն. Ք. ը գիտէ հայերէն թէ ոչ, ևս համարձակում եմ ասել, որ պ. Ն. Ք. ը հայերէն չը գիտէ, որ և կ'աշխատեմ ալստեղ ապացուցանել:

Ուղիղը սխալ համարել տգիտութեան նշան է:

Պր. Ն. Ք. ը չարձակում է պ. Արասխանեանի վրայ, որը քահանայ բառը դործ է ածում քուրմի նշանակութիւնամբ, Նալում' Ենք Առձևուն բառարանը և տեսնում ենք, որ քահանայ բառի դէմ դրած է ի միջի պլոց, և «քուրմ կոոց» և Վենետիկի հայրերն էլ համարակ չեն ձեր կարծիքով, պ. Ն. Ք., կամ չը լինի թէ ասէք, որ մեր հին մատենագիրները ուսում են առել ալն «ֆրանսիական դպրոցներում, ուր կրօնի աւանգուժը խափանած է»:

Ինչու էք կարծում, պ. հակաբան, որ գօրեղան ալ բառ չը կա հայերէնում: Հաճեցէք, պարոն, բանալ Առձևուն բառարանի 302-րդ երեսը. ալստեղ դուք կը կարդաք—գօրեղան ամ, աջալ, չ. ուժ առնել:

Ինչու էք սխալ համարում, պ. քննադատ, Ներկալ աշխատութիւն ասելը ե ինչու էք ալդ բառերի կողքին փակագծում դնում ռուսերէն **востоящій трудъ**. **Трудъ** դուք ինքներդ էլ էք թարգմանում աշխատութիւն բառով ձեր լոգածի չորրորդ տողում, իսկ Եթէ դէմ էք Ներկալ բառին, ալդ էլ մի հիմք չունի ե Ներկալ գիրքը ասել աւելի ճիշդ է քան ալժմեան գիրքը, ինչպէս դուք էք ասում:

Ո՞րն է ռուսաբանութիւն, ընթերցողներ, Ներկալ աշխատութիւն թէ մերկ իրողութիւն (**ТОЛЫЙ ФАКТЪ**), ինչպէս ասում է պ. Ն. Ք.:

Բայց որն ասեմ, որը խոստովանիմ, պ. Ն. Ք.-ի ամբողջ լոգածը կազմած է անկանոն Նախադասութիւններից ե սխալներից: Եւ ալդ անկանոնութիւնները ու սխալները բոլորը ալստեղ չեմ բերիլ, որ չը ձանձրացնեմ ընթերցողներին, բայց խոստանում եմ, եթէ պահանջի պ. Ն. Ք.-ը փաստերով ապացուցանել, որ պ. Ն. Ք.-ի լոգածի բոլոր Նախադասութիւններից երկուսից մէկը՝ կամ ամբողջապէս անկանոն է կամ լիքն է ամենակոպիտ սխալներով, իսկ ալժմ կը բաւականանամ միայն մի քանի օրինակներով: Առաջ բերե՛ք նորա լոգածից մի կտոր:

«Աշխարհագրական բաժնի վերաբերութեամբ պէտք է միայն ասենք, որ շատ տեղ մութն ու անհասկանալի կը մնան, մանաւանդ քարտէսներ չը լինելու պատճառով: Ալդ տեղեկագրական անուանեալ շատերը հանած են արձանագրութիւններից, նրանց ոչ ուղիղ ձևերն են լայնի մինչ օրս և ոչ էլ իսկական տեղերը, ուրեմն աշխատասիրողը պիտի ջանար վշատակ ու ած տեղեկագրականները մի քարտէսի վրա՛ պատկերացնել, ինչքան հնարաւոր է. գրքի վերջին կցած քարտէսն ալդ Նալատակին չէ կարող ծառայել, որովհետև Նախ շատ փոքր է ու վատ»:

փորագրած և երկրորդ արձանագրութիւններէց հանած անունները չէ բովանդակում»:

Բաւական տարօրինակ տրամաբանութիւն է, այնպէս չէ, ընթերցող, թէ որովհետև իսկական տեղերը չալտնի չեն, ալդ պատճառով պէտք էր քարտէզի վրայ նշանակել տեղերը: Բայց ալդ ոչինչ, ում ինչ տւած է՝ այն պէտք է պահանջել:

Հաճեցէք, պ. Ն. Ք. տալ ձեր չօղւածը ձեր աշակերտներին, որոնք, խեղճերը, մոռանում են իրանց երևելի հալիաբան ուսուցիչների աւանդած քերականական կանոնները՝ հէնց որ ձեռքերն են առնում զանաղան համբալներին աշխատասիրած գրքերը, և պահանջեցէք, որ նրանք (ձեր աշակերտները) վերլուծեն վերևը բերած նախադասութիւնները: Ո՞ր է կը մնան բալի անուն բալին (ենթական), երևի աշխարհագրական բաժինը.—«Ալդ անդեկադրական անունները».—ալդ ինչ ալդ է, վերելում գոլք, խօսելով երկրորդ բաժնի մասին, ասել էք միայն «տեղեկադրական և քաղաքակրթական նկարագրները» և «աշխարհագրական բաժին».—«Անունները շաանը» թէ անուններ ից շատերը: Թող կը տաք ուրիշներին էլ գործ ածել ալդպիսի ուսուցաբանութիւններ:—Եթէ գործ էք ածում «հանած են, գուրս է թողած», ինչու էք ուրիշ տեղերում գործ դնում «վիշատակուած, խափանուած է» և ալն. պէտք է ասել իմ հանած կտորները և կտորները հանուած են:—Ի՞նչ կը նշանակի «տեղեկագրականները պատկերացներ»: Ինչ բանի հետ էք կապում «ալդ նպատակին» խօսքերը. կարելի է արդեօք ասել՝ «գրքի վերջին կցած քարտէզը տեղեկագրականները մի քարտէզի վրայ պատկերացնել չի կարող»:

Ինչ էք կարծում, պ. Ն. Ք., մարդավարի կէտագրութիւնն էլ օտարաբանութիւն է: Կը վալելի արդեօք հալիաբանին ինստիտուտկալի նման կաղել կէտագրութեան մէջ:

«Ալդ ծանօթութիւնները թուով շատ քիչ են, հաղիւ մի տասնեակ լինի»: Ասացէք, խնդրեմ. պ. Ն. Ք., եթէ ձեր աշակերտը ալդպիսի սխալ անէր, ինչ թւանշան կը դնէիք.—ի հարկէ ոչ 5:

«Հալկական եկեղեցիների պատերի վրայ եղած մարդագլուխ ձկներին»: Բնագիտութեան որ դասադրքի մէջ էք կարդացել, թէ ձկները ապրում են պատերի վրայ:

«Բայց որ մարդն է անսխալական, որ պ. Արասխանեանցը լինի, սխալները միշտ կարելի է ուղղել, ուստի խորհուրդ ենք տալիս և իւր քարտէսն էլ ուղղել և Արալեան լճի հարաւարեանց գաւառն անւանել Ջոկիլէնէ և ոչ Սուկդա»:

Բաւական չէ, որ Ջոկիլէնէ աւելցնեն, պ. Ն. Ք.: ը պահանջում է, որ Սուկդա չը գրեն, թէև Մասպէրօի քարտէսում ալդպէս է գրած: Ե, ինչ արած, պէտք է ջնջել Սուկդա անունը—magister dixit, այն էլ ալդպիսի

մի հանճարեղ magister, որ Արալեան լճում զաւառներ է գտել, իմ կարծիքով, ոչ այս ոչ այն՝ այդ դաւառը պէտք է անւանել Քարամիանէ, որպէս զի լաւէրժանայ երևելի գիտնական Ն. Ք.-ի անունը ¹⁾:

«Խորհուրդ ենք տալիս և իւր քարտէսն էլ ուղղել»,— և ը դնելուց լստով էլ ը ինչո՞ւ ք աւելցնում:

«...Այն ժամանակ լռութեամբ գործող և ակժմ աղմկալուղ ժողովներով և ակժմ զրքերի տղադրութեան ընկերութեան»:

Առաջին անգամ ենք իմանում, որ գրքերը ժողով են կազմում և այն էլ աղմկալուղ, Շատ հետաքրքրական կը լինէր տեսնել այդ գրքերը գատարանում ամբաստանւած «ВЪ НАРУШЕНИИ ОБЩЕСТВЕННОЙ ТИШИНЫ»:

«Եւ...»,— հարկէնի ուսուցիչը այդ և-ը կը քննէր և կը գրէր ի սկի:

«Տպագրութեան ընկերութիւն...», տպագրել և հրատարակել տարբեր բաներ են:

«Անքան միայն պիտի հաղորդենք...», «գրքի» (այս գրքի) մէջ»,— այդ հնաբանութիւն է, պ. Ն. Ք. գրքիս աշխարհաբար կը նշանակի իմ գրքի:

«Արդէն ի սկ 52 գիտնականների անունները տալով՝ ապացուցանելով...»,— տալով՝ ապացուցանելով դերբալերից կաղմւած ալիք երկու լարկանի շէնքը շատ անճշտնի է. արդէն ի սկ հնաբանութիւն է:

«Մագալէրոյի (ինչու ոչ Մասալէրոյի) «Արեւելեան ազգերի հին պատմութիւնից» քաղել է իւր նիւթը, որից վերցրել է և գրքի վերնագիրը...»:

Ի՞նչ կը նշանակի իւր նիւթը և լստով գրքի վերնագիրը. չէ որ նիւթը և վերնագիրը երկուսն էլ գրքինն են. ինչիցն է վերցրել պ. Արասխանեանցը իւր գրքի վերնագիրը՝ նիւթից (նիւթը, որից...), թէ Մասալէրոյի «Արեւելեան ազգերի հին պատմութիւնից»: Վերջապէս՝ ով է քաղել. մենք ի հարկէ հասկանում ենք, որ իսոսքը պ. Արասխանեանցի մասին է, բայց ալիք ամենևին չի արգարացնում պ. Ն. Ք.-ին. պ. Արասխանեանցի գործ զրա՞ծ «գրքի բովանդակութիւնը կաղմող ազգերի» դարձածքը նոյնպէս հասկանալի է, բայց չը նախելով դրան՝ պ. Ն. Ք. ը իրաւունք չի տալիս նրան գործ ածել ալիպիսի դարձածք:

¹⁾ Սուգդա կամ Սոգդի կամ Սոգդ. շատ անգամ նոյնացնում են Սաղաստանի և Սոգդիանայի հետ: Արձանագրութիւնների մէջ, սակայն, սակայնք կամ սաղաստանցիք առանձին են յիշուում, սոկդիացիք՝ առանձին: Եւ չեմ տեսնում թէ Սոկդիանան այժմայ Զոկաստանի տեղումն էր, այլ միայն անկարելի չեմ համարել որ զոկերը սոկդիացիներից լինեն: Այս ենթադրութիւնը հաւանականութիւն է դանում՝ նրանով, որ Հին Սաղաստանի անունով, որ Բակարիայի Հիւսիսումն էր գտանւում, կոչուում էր նաև այժմայ Նուխայ երկիրը (Շաքի, Շաքաստան, Սաղաստան):

«Պէտք է հանգամանքից օգտուել և ցոյց տալ ամեն տեղ, թէ ինչպէս Աստուածաշնչին համաձայն են բոլոր արձանագրութիւնները՝ թէ հզօր-տական, թէ բարեկական գիտութեան վերաբերութեամբ...»:

Վերաբերութեամբ որ բալին է վերաբերում՝ «ցոյց տալ» թէ «համաձայն են», — ի հարկէ «ցոյց տալ»։ Իսկ եթէ ալդ պղպտէ, կը նշանակի ոչ բոլոր նշանն է իւր տեղումը դրած և ոչ էլ «թէ հզօր-տական, թէ բարեկական գիտութեան վերաբերութեամբ» բառերը։

«...Նախադասութիւնները... հաւերէն անիմանալի են»։ — պէտք էլ՝ գրել՝ անհասկանալի են, որովհետեւ անիմանալի կը նշանակի անմատ-չելի մեր գիտակցութեան համար և ոչ թէ անհասկանալի։

«...Նորագոյն աղբիւրներից, ինչպէս Darmsteter-ից քաղել»։ — Պէտք էր ասել «օրինակի համար»։

«Չը նախելով քիչ վերևում...»։ — պէտք է ասել «չը նախելով որ...»։

Այն բոլոր սխալները, որ մենք մինչև այժմ ցոյց տեցինք, կամ գոնէ նրանց մեծ մասը՝ մեր տեսակէտով՝ շատ մեծ նշանակութիւն չ'ունեն, որովհետեւ հանճարեղ գրածքը կը մնալ հանճարեղ գրածք և իմարը — իմար թէ այն դէպքում, եթէ «հաւերէն թարգմանել» գրած լինի և թէ այն դէպքում, եթէ «հաւերէն թարգմանել» գրած լինի (պ. Ն. Ք. գրում է՝ հաւերէն թարգմանել...)։ Կանոնաւոր լեզուն ոչ Որգօնին խելօք մարդ կը դարձնի, ոչ էլ Տարտիւֆի մէջից կը հանի ալն, ինչ որ նա մօր կաթի հետ է ծծել, որովհետեւ «կաթի հետ ծծածը հոգու հետ զուրս կը դալ»։

Հապա ինչու էինք մինչև այժմ այնքան բծախնդրութեամբ քննադատում պ. Ն. Ք.-ի լեզուն։ Ահա ինչու։ Ուզում էինք ցոյց տալ, որ պ. Ն. Ք.-ն անբարեխղճութեամբ է վերաբերում դէպի իւր հակառակորդները։

Բայց մի ցոյց տւած սխալների մէջ կային և ալնպիսիները, որոնք լառաջացել են ոչ թէ նրանից, որ պ. Ն. Ք.-ը քերականական կանոնները Լաւ չի իմանում կամ որ նա անհոգութեամբ է վերաբերել իւր լուծածի լեզւին, այլ նրանից, որ պ. Ն. Ք.-ը չի կարողանում տրամաբանօրէն գրել։ Նոր փաստեր։

«Գրքիս մէջ բովանդակած պատմական փաստերը (ասում է պ. Ն. Ք.) երեք մասի կարելի է բաժանել։ զխաւոր մասն է արձանագրութիւններից քաղած պատմութիւնը Նզիպտոսի, Միջագետքի և Իրանի. աւելի փոքր մասը կաղմում են տեղեկագրական և քաղաքակրթական նկարագիրները, փոքրագոյն բաժինն է աւանդութիւններն ու ծանօթութիւնները։ Առաջին և երկրորդ մասների վերաբերութեամբ ալքաքան միայն կարելի է ասել, որ ալդ տեղեկութիւնները, որոնք մեծ մասամբ մերկ իրողութիւններ են միայն, եղիպտագիտութեան և ասորագիտութեան հաստատուն եղրականցութիւններն են»։

Ասացէք, ինչդրեմ, ալս ինչ խառնաշփոթութիւն է, ալս ինչ քաօս է։ Միթէ պ. Արախանեանցի դրքի բովանդակութիւնը միայն պատմական

փաստեր են. Դիցուք թէ ալդպէս է. շատ լաւ բայց, որ ալդպէս է, ինչպէս կարելի է պատմական փաստերը ալնպէս բաժանել, որ մասերից մէկը ճշմարագ իրենք լինի, իսկ միւսը՝ ծանօթութիւններ, Ո՞ր հրաշագործը չանձն կ'առնի պատմական փաստերը ալնպիսի բազմաթիւ չաջորդական մետամորֆոզաների ենթարկել, որ նրանք դառնան քաղաքակրթական ճշմարագներ, լսող աւանդութիւններ ու ծանօթութիւններ, լսող տեղեկութիւններ, լսող հագուստները հանեն և դառնան մերկ իրողութիւններ և վերջապէս հաստատուն եղրակացութիւններ: Ոչ, ոչ մի սքանչելագործ ալդպիսի բան չի կարող անել և ալդպիսի մի հատուած գրելու համար կամ պէտք է հեղինակի գլխում գաղափարները աչքակապուկ խաղալիս լինեն կամ ինքը հեղինակը պէտք է ցանկութիւն ունենայ ընթերցողներին աչքերը կապել:

Մի ուրիշ ապացոյց, որ պ. Ն. Ք.-ը չօղած գրելիս աւելի ուշադրութիւն է դարձնում քերականութեան, ալն էլ քերականութեան միայն մի մասին՝ էտիմոլոգիան (սինտաքսիսում պ. Ն. Ք.-ը շատ բոբիկ է) քան տրամաբանութեան, — մի ուրիշ ապացոյց, ասում եմ, ալն է, որ նախադասութիւնները միմեանց հետ կապող շաղկապները պ. Ն. Ք.-ը գործ է ածում զարմանալի «ազատամտութեամբ», կատարելապէս «առանց իմաստի խտրութեան»: Թէ և, մինչդեռ, ուստի, ուրեմն և ալն գործ են ածում բոլորովին անտեղի, մանաւանդ թէ եւր, որի գործածութիւնը պ. Ն. Ք.-ը ֆանատիկոսութեան է հասցնում:

ՀԱՄԲԱԿ